

ՇԱՐԱԳԱՍՈՒԹՅԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԴԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅՆԵՐՆՈՒՄ

Խ. Գ. ԲԱԳԻՎՅԱՆ

Կապակցված միտք արտահայտելու համար անհրաժեշտ է նախադասություն կազմող բառերը դասավորել որոշակի կարգով: Բառերի դասավորության այդ կարգը լեզվաբանության մեջ ընդունված է կոչել շարադասություն:

Շարադասությունը՝ ստորոգման և ինւոնացիոն ավարտվածության հետ միասին, հանդիսանում է հաղորդակցման միավորի՝ նախադասության ձևավորման կարևորագույն միջոցներից մեկը: Շարադասության այս դերը նկատելի են դեռ Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ մեկնիչները: Ընդհատ է, նրանք շարահյուսության հարցերով ընդհանրապես չեն զբաղվել, բայց, այնուամենայնիվ, անդրադարձել են շարադասությանը՝ այն թնեկով ձևաբանության մեջ, կապելով մեծ մասամբ համաձայնության, ունաբանության, իսկ երբեմն էլ՝ նախադասության սահմանման հետ:

Զարգացնելով Դիոնիսիոս Թրակացու և նրա քերականության հայ մեկնիչների դատողությունները նախադասության սահմանման և նրա անդամների շարադասության մասին՝ գրաբարի քերականները շարադասությունը համարում էին բառերը նախադասության մեջ կապակցելու, շարահյուսելու արվեստ: «Շաւազրութին է արհեստ՝ դրանն ստուգապես շարադրելոյ՝ Արդ՝ բանն է շարամանութին բառից առ ի զտրամախոհութին յայտնելոյ»¹:

Մխիթար Սեբաստացին ավելի որոշակիորեն է ընդգծում շարադասության դերը. նա գրում է, որ բառերի դասավորությունից նախադասություն է ստացվում միայն այն ժամանակ, երբ այդ բառերը այնպիսի կարգով շարվեն, որ կարողանան մարդու ներքին դատողությունը արտահայտել²:

Լեզվաբանական գրականության մեջ շարադասության նման սահմանումը շարունակվեց նաև հետագա ժամանակներում, մինչև մեր դարի 30-ական թթ.:

Բազմավաստակ հայագետ Մ. Աբեղյանը, նույնպես հետևելով ավանդական ըմբռնմանը, շարադասությունը դիտում էր որպես բառերի կանոնավոր դասավորություն, որի շնորհիվ կազմվում է նախադասությունը. «Բառերը՝ միասին մի խոսք կազմելու համար պիտի որոշ շարքով դասավորված լինեն»³:

Իսկ Ստ. Մալխասյանցը, գերազնահատելով շարադասության դերը, դրան է զուգորդում նաև կապակցության մյուս երկու եղանակները՝ համաձայնությունն ու հոլովառությունը: «Շարադասությունը քերականության այն մասն է,—գրում է նա,—որ ավանդում է կանոններ՝ բառերը համապատասխան ձևերով (հոլովներով, խոնարհելով) իրար հետ դասավորել այնպես, որ կանոնավոր և հասկանալի խոսք (նախադասություն) ստացվի»⁴:

Այսպես չեն, սակայն, ժամանակակից լեզվաբանների հայացքները շարադասության վերաբերյալ: Շեղվելով շարադասության ավանդական սահմանումից՝ նրանք շարադասությունը համարում են միայն նախադասության անդամների սահմանված (ընդունված) կարգ:

Պրոֆ. Գ. Սևակը շարադասությունը դիտում է որպես նախադասության անդամների դասավորության ընդունված կարգ⁵:

1 Կ զ Լ Մ Ե Ս Գ ա լ ա ն ո ս, Քերականական և տրամաբանական ներածություն առ յիմաստություն, Հոռմ, 1645, էջ 23:

2 Տե՛ս Մ խ ի Թ ա Ր Ս Ե ր ա ս տ ա ջ ի, Քերականություն գրաբար լեզուի Հայկազեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 228:

3 Մ. Ա Ե Լ Դ յ ա ն, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 532:

4 Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ջ, Հայերենի բացատրական բառարան, Երևան, 1944, հատ. 3, էջ 504:

5 Գ. Ս և ա կ, Հայոց լեզվի շարահյուսություն, դասագիրք, Երևան, 1959, էջ 73:

Շարադասությունը որպես նախադասության անդամների դասավորություն է ընդունում նաև զոկտոր Վ. Առաքելյանը. «Շարադասությունը շարահյուսության մի բաժինն է, որն ուսումնասիրում է նախադասության անդամների նախադասության մեջ իրար նկատմամբ ունեցած դիրքավորումը, այսինքն՝ շարադասման կարգը, տեղը»⁶ (ընդգծումը մերն է—Խ. Բ.)։

Բերված երկու սահմանումներն էլ թերի են, որովհետև գրանցում նախ՝ աչքաթող է արված բառակապակցությունների շարադասությունը, ապա՝ նկատի են առնված միմիայն նախադասության անդամներն ու դրանց դիրքավորումը նախադասության մեջ, մինչդեռ նախադասության ձևավորմանը մասնակցում են ոչ միայն նախադասության անդամները, այլև նախադասության անդամ չհանդիսացող բառերը՝ կապերը, շաղկապները, ձայնարկությունները, եղանակավորող բառերը, ինչպես նաև կոչականները, քերականական մասնիկները՝ «և»։ «պիտի», «մի», «ոժանդակ բայը և այլն, որոնց շարադասությունը նախադասության կազմում նույնքան կարևոր է, որքան նախադասության անդամ հանդիսացող բառերինը։ Օրինակներ։

«Հարթ ու ողորկ չէր իրա ճանապարհը» («Սովետ. Հայաստան», 6 հոկտ. 1965)։ «Այդ մասին են պատմում նկարչի մյուս գործերը» («Երևկոյան Երևան», 5 հոկտ., 1965)։

«Այ տղա, իսկի ճանաչեցի ոչ» (Հովհ. Քումանյան)։

Բերված նախադասություններում եթե տեղափոխենք «ու», «մասին», «այ» նախադասության անդամներ չհանդիսացող բառերի շարադասությունը, ապա նախադասությունները կդադարեն միտք արտահայտություն, կվերածվեն բառերի թառախ։

Այստեղ կապի և ձայնարկության տեղափոխության մեկական դեպքեր են հնարավոր միայն, բայց որում կապի տեղափոխությունը նոր միտք է հաղորդում նախադասությանը՝ «Այդ են պատմում նկարչի մասին մյուս գործերը», իսկ «այ» ձայնարկությունը հնարավոր է տեղափոխել միայն «տղա» կոչականի հետ («իսկի ճանաչեցի ոչ, ա՛յ տղա») և ոչ երբեք առանձին։

Ուրեմն շարադասությունը պետք է դիտել որպես թե՛ նախադասության անդամների, և թե՛ նախադասության անդամ չհանդիսացող բառերի դասավորության որոշակի կարգ, որի շնորհիվ ստորոգման և ինտոնացիոն ավարտվածության պայմաններում միտք է արտահայտվում։

Հայոց լեզվում նախադասություն կազմող բառերը մեծ մասամբ ազատ կերպով կարող են տեղաշարժվել նախադասության սկզբից մեջտեղը, մեջտեղից վերջը և ընդհակառակը և այդ պայմաններում գործածվել այլևայլ բառերի հետ. օրինակ՝ են, սլայնառ, դահլիճում, վառվում, լույսերը բառերը որոշակի կարգով դասավորելու դեպքում է միայն նախադասություն ստացվում՝ «Դահլիճում վառվում են պայծառ լույսերը»։ Նույն բառերը կարելի է դասավորել և այսպես՝ «Պայծառ դահլիճում վառվում են լույսերը», ինչպես նաև՝ «Դահլիճում վառվում են լույսերը պայծառ» և այլն։

Բայց շարադասության դիրք չի սահմանափակվում միայն նախադասության շրջանակներում. այն հատուկ է նաև բառակապակցություններին, որոնց հիմնականում հատուկ է կայուն շարադասությունը։ Անդամների տեղափոխություն հնարավոր է այնպիսի բառակապակցություններում, որտեղ բարդության գերադաս անդամն ունի երկու կամ ավելի ստորադաս համասեռ լրացումներ (զեղեցիկ, կաւմիւր ծաղիկներ, խելացի, հմուտ, տեղին դիտողություններ)։ Այդ դեպքում ստորադաս բառերի դիրքը իրար նկատմամբ ազատ է, իսկ գերադասի նկատմամբ՝ կայուն։ Իսկ երբ գերադաս անդամն ունի անհամասեռ լրացումներ, այդ դեպքում դրանցից միայն մեկն է ավելի սերտորեն կապվում գերադասի հետ՝ դրվելով նրանցից անմիջապես առաջ, իսկ մյուսները, ստորադասվելով այդ կապակցությանը, նախադաս դիրք են զբաղում վերջինիս նկատմամբ։ Այս դեպքում ստորադաս բառերի դիրքային հարաբերությունները ազատ չեն ինչպես գերադասի, այնպես էլ միմյանց նկատմամբ (առաջին ղեղի համամանատար, Լեկաթե բաւակ ձող, ուսանողական ճուր բաղամաս, ոսկրտով դրաղվող երիտասարդ և այլն)։

Այդպես կայուն է նաև բաղադրյալ անունների շարադասությունը՝ Հայկ. Սևի դիտությունների ակադեմիայի քվյալից—անդամ, Հայկ. Սևի Մինիստրների սովետի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրություն և այլն։

Այսպիսով, շարադասությունը սահմանելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն նախադասության անդամներն ու նախադասության անդամներ չհանդիսացող բառերը, այլև բառակապակցությունները։

Բառերի դասավորության ընդունված կարգը (նախադասություններում և բառակապակցությունների մեջ) կոչվում է շարադասություն։

6 Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատ. 1, 1958, էջ 457։

Շարադասությունը, որպես քերականական արտահայտման միջոց, իր դերով նպաստում է նախադասության մտքի և բառակապակցությունների իմաստի ձևավորմանը:

Շարադասությունը, որպես նախադասության ձևավորման հիմնական միջոց, բնութագրական է աշխարհի բոլոր (ավելի քան 2000) լեզուների համար: Բայց այդ լեզուների տարրեր խմբերում այն դրսևորվում է տարրեր ձևերով՝ դրանց մի մասում ունենալով քերականական արտահայտման ակտիվ, իսկ մյուսներում՝ պասիվ դեր: Այսպես, անջատական տիպի լեզուներում (չինարեն, տիբեթերեն, անգլերեն, ֆրանսերեն, աննամերեն) շարադասությունը քերականական արտահայտման հիմնական միջոց է. մեծ մասամբ շարադասությամբ էլ պայմանավորվում են նախադասության անդամների ֆունկցիաները:

Վաստակավոր հայագետ Հր. Աճառյանը անջատական լեզուների մասին գրում է.

«Չինարեն բոլոր բառերը միավանկ և անփոփոխ են, ինչ պաշտոն էլ որ ունենան հայերենում: Շարադասության մեջ, այն բոլոր մասնիկների փոխարեն, որոնք մենք գործածում ենք բառերի զանազան քերականական ձևերը երևան հանելու համար, չինարենը գործածում է այնպիսի բառարմատներ. որոնք իրենց ամբողջական նշանակությունը պահել են, և կամ՝ բառերի քերականական առնչությունները որոշվում է նախադասության մեջ նույն տեղով»⁷ (ընդգծումը մերն է — Խ. Բ.):

Ժամանակակից անգլերենում և ֆրանսերենում (որոնք հիմնականում անջատական տիպի լեզուներ են) ենթակայի և ուղիղ խնդրի ֆունկցիաները որոշվում են միայն նախադասության մեջ դրանց գրաված տեղով, եթե փոխվում են դրանց տեղերը, ապա փոխվում են նաև ֆունկցիաները:

Անգլերենի «The boy caught a fish» (տղան որսաց ձուկ) նախադասության մեջ «The boy» (տղան) ենթակա է միայն նրա համար, որ դրված է «caught» (ռոնեռ) ստորոգյալից և «a fish» (ձուկ) կրող խնդրից առաջ, իսկ եթե փոխենք «boy» ենթակայի և «fish» կրող խնդրի տեղերը, առաջ «fish»-ը կդառնա ենթակա, իսկ «boy»-ը՝ կրող խնդիր: «The fish caught the boy» (ձուկը ռոնեռ տղային):

Այդպես չէ սակայն կցական ու թեքական լեզուներում (հայերեն, ռուսերեն, սլավոնական շատ լեզուներ, թուրքերեն և այլն), որտեղ նախադասության անդամի ֆունկցիան որոշվում է ոչ թե ըստ գրաված տեղի, այլ ըստ կարևորության աստիճանի, հաղորդակցման ծանրաբեռնվածության (տղան որսաց ձուկ: Ձուկ որսաց տղան: Որսաց տղան ձուկ: Ձուկ տղան որսաց և այլն): Բերված տարրերակներում տղան միշտ մնում է որպես ենթակա, իսկ ձուկը՝ կրող խնդիր: Այդ կարգի լեզուներում շարադասության քերականական դերը համեմատաբար նվազում է, որը բացատրվում է այդ լեզուներում բառահարաբերական ձևային առատությամբ, որից զուրկ են անջատական լեզուները⁸:

Կցական և թեքական լեզուներում նախադասությունները ոճավորելու, դրանց նոր իմաստներ հաղորդելու, այդ իմաստները երանգավորելու հետ միասին շարադասությունն ունի նաև շարահյուսական բավական լայն ոլորտ: Ահա թե այս մասին ինչ է գրում ակադեմիկոս Վ. Վինոգրադովի խմբագրած քերականությունը.

«Порядок слов в предложении играет у нас прежде всего грамматическую, а затем уже и многообразную стилистическую роль»⁹.

Ռուսաց լեզվին վերաբերող այս իրողությունը հավասարապես վերաբերում է նաև հայերենին:

Ժամանակակից հայերենում շարադասությունը երբեմն առնչվում է բառի խոսքի մասային պատկանելության, նախադասության անդամի ֆունկցիայի փոփոխության, ստորոգման, ինչպես նաև ուրիշի ուղղակի խոսքի հետ կապված հեղինակային խոսքի դրսևորման, երբեմն էլ նախադասության բնույթի ձևակերպման հետ:

Այսպիսով, ինչպես ամեն մի լեզվում, այնպես էլ ժամանակակից հայերենում լինելով նախադասության կառուցվածքի անբաժանելի բաղադրիչներից մեկը՝ շարադասությունը հանդես է գալիս իբրև շարահյուսական երևույթ, հետևաբար ունի բնականական նշանակություն ամեն մի նախադասության մեջ, որն ունի մեկից ավելի բովանդակներ:

⁷ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների, Ներածություն, Երևան, 1955, էջ 204:

⁸ S. S. U. Արևիցյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 10:

⁹ «Грамматика русского языка» (под редакцией академика В. Виноградова), том II, Синтаксис, часть I, Москва, 1960, էջ 38:

Քննենք շարադասության քերականական ֆունկցիայի մի քանի դրսևորումները ժամանակակից հայերենում:

Ժամանակակից հայերենում նախադասության որևէ անդամի շարադասության փոփոխությունը երբեմն առաջացնում է նույն անդամի ֆունկցիայի փոփոխություն: Մեր լեզվում նկատվում են դեպքեր, երբ նույն նախադասության մեջ ուղղական և հայցական հոլովներով դրված անդամների տեղերը անջատական տիպի լեզուների նման կայուն են. այդպիսի նախադասություններում ենթակայի ֆունկցիան պայմանավորված է միայն ստորոգյալից առաջ դրվելով՝ իսկ ուղիղ խնդրինը՝ ստորոգյալից հետո դրված լինելու հանգամանքով: Իրանց տեղափոխությունից փոփոխվում են նաև նրանց ֆունկցիաները: Լեզվական նման երևույթներ, սակայն, հայոց լեզվում հազվադեպ են: Ամենաբնութագրականներից մեկն այն է, երբ ենթական և ուղիղ խնդիրը համապատասխանաբար արտահայտված են լինում գոյականի ուղղական և հայցական հոլովների նույնանման ձևերով: Ճնշման տիպի նախադասություններում խնդրի և ենթականի սահմանադատումը դժվարանում է գոյականների հասկացությունների մոտիկությամբ՝ Իրայի արտահայտած գործողությունը երկուսի վրա էլ հավասարապես անցնելու հնարավորությամբ, ինչպես նաև նրանով, որ նախադասությունը կոնտեքստից դուրս է վերցված¹⁰: Սա ասված է ուսերենի համար, բայց հավասարապես վերաբերում է նաև հայերենին. օրինակ՝ «Արտադրությունը կարգավորում է սպառումը»:

«Արտադրությունը» ենթականի և «սպառումը» ուղիղ խնդրի տեղերը փոխելիս փոխվում են նաև նրանց ֆունկցիաները, բայց նախադասությունը տրամաբանորեն ճիշտ է մնում, որովհետև արտադրությունը և սպառումը փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով, հետևաբար, ինչքանով որ ճիշտ է վերևի նախադասությունը, այնքանով էլ ճիշտ կլինի «Սպառումը կարգավորում է արտադրությունը» նախադասությունը:

«Մեծ մասամբ լեզվում եղած ընդհանուր տենդենցներին համապատասխան այդ տիպի նախադասությունները կազմվում են «ենթակա-ստորոգյալ-ուղիղ խնդիր» ֆորմուլայով, որը հնարավոր է դարձնում կոնտեքստից դուրս վերցրած նախադասությունների մեջ եղած սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունների նույնաճանակ ուղղումը, նույնիսկ տարբեր անձերի կողմից»¹¹:

Այս տիպի ոչ բոլոր նախադասություններն էլ հնարավոր առանց մտքի փոփոխության շրջել, դա հնարավոր է միայն այնպիսի դեպքում, երբ դատողության, որը տվյալ դեպքում լրիվ համընկնում է նախադասության հետ, սուբյեկտն ու օբյեկտը լիովին համընկնում են, երկուսն էլ փոխադարձաբար ներգործում են իրար վրա և իրականում հավասարազոր են, մեկը ակտիվ չէ, մյուսը՝ պասսիվ, իսկ եթե իրականության մեջ դրանցից մեկը ավելի ակտիվ դերում է հանդես գալիս, իսկ մյուսը՝ պասսիվ, ապա շրջումը հնարավոր չէ, նման դեպքերում այս ըստ էության հանգեցնում է սխալ դատողության:

Այսպես՝ «Կեցությունն է որոշում գիտակցությունը» նախադասությունը հնարավոր չէ շրջել, այն կարող է արտահայտվել միմիայն նշված ձևով, որովհետև «կեցություն» հասկացությունը իրականության մեջ ավելի ակտիվ դերում է գտնվում, քան «գիտակցությունը», հակառակ դեպքում նախադասությունը գիտականորեն սխալ կլինի (թեև քերականորեն սխալ չէ)՝ որովհետև գիտակցությունը չի կարող որոշել կեցությունը (դա իդեալիստների գաղափարաստությունն է):

Այդպես էլ չի կարելի շրջել հետևյալ դիտողությունների սուբյեկտներն ու օբյեկտները՝ «Անձրևը առատացնում է բերքը», «Արևը պտղաբերում է հողը», որովհետև իրականության մեջ եղած երևույթների փոխհարաբերությամբ արևն ու անձրևը ավելի ակտիվ են, ներգործող, քան հողը և բերքը:

Վերևում բերված նախադասությունների համար բնութագրական է «ենթակա-ստորոգյալ-ուղիղ խնդիր» կառուցվածքային ֆորմուլան, որտեղ ենթականի և ուղիղ խնդրի տեղափոխություններից նախադասությունը տրամաբանորեն ճիշտ է մնում: Իսկ «Կեցությունն է որոշում գիտակցությունը» տիպի նախադասությունների շրջումից թեև ֆորմուլան մնում է նույնը, բայց նախադասության միտքը փոխվում է:

¹⁰ Г. Поченов, Порядок слов как средство выражения синтаксических отношений в современном русском языке («Русский язык в национальной школе», 1961, № 5, էջ 10):

¹¹ Նույն տեղում, էջ 9:

Ժամանակակից հայերենում շատ հաճախ նախադասության երկրորդական անդամի շարադասության փոփոխության հետևանքով փոխվում է նաև նրա ֆունկցիան, թեև անփոփոխ է մնում բառի խոսքի մասային պատկանելությունը: Այս հատկությամբ, սակայն, օժտված են ոչ բոլոր խոսքի մասերը: Այստեղ վճռական դեր է խաղում բառի ընդհանուր իմաստը: Նթև բառն ունի մեկ որոշակի ընդհանուր իմաստ, ապա նախադասության մեջ փոխելով իր տեղը՝ չի փոխի ոչ իր ֆունկցիան և ոչ էլ խոսքի մասային պատկանելությունը (ևթև հաշվի շառնենք փոխանդություններն ու երկրորդական կիրառությունները):

Մեր լեզվում կան նաև ոչ սակավաթիվ այնպիսի բառեր, որոնք ունեն մեկից ավելի ընդհանուր իմաստներ. դրանք «տարբեր խոսքի մասերի միջև տատանվող, կամ իրենց ընդուն հատկանիշներով տարբեր (հատկապես երկու) խոսքի մասերի պատկանող բառեր են»¹²: Այդ բառերը ոչ միայն տարբեր նախադասություններում կարող են հանդես գալ իրրև տարբեր խոսքի մասեր և ունենալ տարբեր ֆունկցիաներ, այլև նույն նախադասության տարբեր շարադասություններում զրկելով այլևայլ բառերի վրա, փոխում են իրենց բառային իմաստը՝ վերածվելով այլ խոսքի մասի (ֆունկցիաների փոփոխությունը հաճախ տեղի է ունենում նաև անկախ խոսքի մասային պատկանելության փոփոխությունից): Այսպիսի բառերի (մեծ մասամբ ածականներ, մակբայներ, շաղկապներ, կապեր և եղանակավորող բառեր) խոսքի մասային պատկանելության և ֆունկցիաների փոփոխություններն են ամենից հաճախ պայմանավորված լինում շարադասության փոփոխությամբ. օրինակ՝

«Ուրախ նժույգը խաղում էր, ոստյուններ գործում» (Բաֆֆի, Սամվել, 1961, էջ 66):

Այստեղ «ուրախ» ածականը գործածված է «նժույգ» գոյականի հետ և կատարում է որոշիչի ֆունկցիա, բայց երբ այն տեղափոխում ենք «խաղում էր» բայից առաջ, արդեն կատարում է ձևի պարագայի ֆունկցիա՝ «նժույգն ուրախ խաղում էր, ոստյուններ գործում»:

Կամ՝ «Անմիտ ծրագիր է,—տխուր ժպտաց Թումասը (Բակունց, Երկեր, էջ 518) և «Անմիտ ծրագիր է,—ժպտաց տխուր Թումասը»: Կամ «Աշխույժ ծաղրածուն այս անգամ արդեն խոսում էր»։ «Ծաղրածուն այս անգամ արդեն խոսում էր աշխույժ»:

Բերված օրինակներում թեև ածականները գործածվել են մերթ բայերի և մերթ գոյականների հետ, բայց չեն փոխել իրենց խոսքի մասային պատկանելությունը: Սակայն հայերենում, կան սահմանափակ թվով ածականներ, որոնք ձևոք բերելով երկփեղկված իմաստ՝ հակում ունեն անցնելու մակբայների շարքը, իսկ դրանցից մի երկուսը արդեն անցել են Օրինակ.

«Խիստ ուսուցիչը հենց առաջին օրը հանդիմանեց նորեկին» և «Ուսուցիչը հենց առաջին օրը խիստ հանդիմանեց նորեկին»։ «Ոմանք կարողում են նոր ստացած նամակները» (Գ. Մահարի, Սև մարդը) և «Ոմանք նոր են կարողում ստացած նամակները»:

Առաջին նախադասությունում խիստ լրացումը որոշիչ է՝ արտահայտված ածականով, բայց նախադասության շարադասության փոփոխության հետևանքով փոխվել է ոչ միայն նրա ֆունկցիան (դարձել է ձևի պարագա), այլև այն վերածվել է բոլորովին այլ խոսքի մասի (դարձել է մակբայ)։

Նույնն է կատարվել նաև երկրորդ նախադասության մեջ «նոր» բառի հետ՝ ածական-որոշիչը դարձել է մակբայ-պարագա։

«Եթե նոր բառը ցույց է տալիս առարկայի որակական հատկանիշ՝ ածական է, իսկ ժամանակի իմաստով գործածվելիս՝ մակբայ է (նոր եկավ, նոր հագուստ)»¹³:

Հայերենում նման երևույթների հաճախ ենք հանդիպում, հատկապես, երբ խոսքը վերաբերում է գոյականներից և այլ խոսքի մասերից մակբայների, կապերի, շաղկապների ու եղանակավորող բառերի շարքն անցնող բառերին։ Իրանց մի զգալի մասը ձևոք է բերել երկփեղկված իմաստ։ Օրինակ՝

«Բայց բոլոր զրական երեկոներից ու հանդիպումներից հետո ես տուն եմ գնում զատարկ ձեռներով ու թափուր սրտով» (Գ. Մահարի, Սև մարդը)։

Այստեղ «հետո» բառը զրկվել է նյութական իմաստից և դրվելով նախադասության անդամներից մեկի վրա՝ ձևավորել նրա պաշտոնը։ Բայց՝ «Հետո բոլոր զրական երեկոներից ու հանդիպումներից ես տուն եմ գնում զատարկ ձեռներով ու թափուր սրտով» նախադասության մեջ «հետո»-ն մակբայ է, նախադասության ինքնուրույն անդամ (ժամանակի պարագա), մինչդեռ առաջին նախադասության մեջ այն կապ էր՝ զուրկ նյութական իմաստից։

¹² Ս. Արա համայն, Ժամանակակից հայերենի չթերվող խոսքի մասերը, 1959, էջ 11։

¹³ Նույն տեղում, էջ 23։

նույնն է նաև «Հանգավ վերջին ճրագը, ու բարաքը հանգստացավ կարկուտից հետո ծեծված արտի նման (կապ)» (Գ. Մահարի, Սև մարդը)։

Բայց՝ «Հանգավ վերջին ճրագը ու ռետո բարաքը հանգստացավ կարկուտից ծեծված արտի նման» (մակբայ-ժամանակի պարագա)։

Ժամանակակից հայերենում շարադասության փոփոխությունը հրեման առաջացնում է նաև շաղկապների ֆունկցիայի ու խոսքի մասային պատկանելության փոփոխություն։

Հայտնի է, որ շաղկապները սպասարկու բառեր են, որոնք ցույց են տալիս հարաբերական տարբեր վերաբերություններ և ունեն բառային յուրահատուկ իմաստ։ Հենց իմաստի այս յուրահատկության շնորհիվ է, որ շաղկապը նույն նախադասության մեջ փոխելով իր տեղը, հրեման ձևը է բերում նոր իմաստ, և խոսողի վերաբերմունքն է արտահայտում նախադասության կամ նրա որևէ անդամի նկատմամբ, այսինքն վերածվում է եղանակավորող բառի։

Ոճական հետաքրքիր կիրառություն ունի «սակայն» շաղկապը։ Ճիշտ է, այն հակադրության հարաբերություն է արտահայտում, բայց անցնելով նախադասության մեջտեղը կամ վերջը, հրեման մոտենում է եղանակավորող բառերին. «Հիմնականում օգտագործվելով կապակցվող մասի սկզբում, այս շաղկապը կարող է առանց իմաստի որևէ լուրջ փոփոխություն առաջացնելու, անդես գալ նաև նախադասության տարբեր անդամներից առաջ (մեծ մասամբ ստորոգյալից) և նույնիսկ նախադասության վերջում։ Շարադասական այս հատկանիշով այս շաղկապը մոտենում է եղանակավորող բառերին և շաղկապական կիրառություն ունեցող համեմատյալ դեպքում նույնամեծությամբ (այսուամենայնիվ) բառերին»¹⁴։

Օրինակներ՝ «Անցավ նաև երրորդը... սակայն ոչ ոք չնկատեց նրան, այլևս չերևաց այն ցնորական տեսիլքը» (Բակունց, Երկեր, էջ 626)։

«Եվա» էին հնչում նրա շուրթերը, սակայն «լիլիթ» էր արձագանքում նրա հոգին» (Ավ. Իսահակյան)։

Երբ փոխում ենք «սակայն» շաղկապի տեղը, ճիշտ է, այն լրիվ չափով չի կորցնում հակադրություն ցույց տալու իմաստը, բայց մեծ հակում է ցուցաբերում եղանակավորող բառերի շարքն անցնելու։

«Անցավ նաև երրորդը... ոչ ոք չնկատեց նրան, այլևս չերևաց սակայն այն ցնորական տեսիլքը»։

«Եվա» էին հնչում նրա շուրթերը, «լիլիթ» էր արձագանքում սակայն նրա հոգին»։

Նկատելի է նաև հակառակ երևույթը, երբ եղանակավորող բառի դերում հանդես եկած «իսկ» և «սակայն» շաղկապները վերստին ստանում են իրենց նախկին, շաղկապական ֆունկցիան ու խոսքի մասային հատկանիշը։

«Եվ» բառը, նույնպես ունենալով երկփեղկված իմաստ, «իսկ»-ի և «սակայն»-ի նման կտրող է մերթ նախադասություններ կապել և մերթ եղանակավորել։

Օրինակ՝ «Նա գիտեր բոլոր նժույգների անունները, ծագումը, տարիքը և ծանոթ էր յուրաքանչյուրի բնավորության հետ» (Բաֆֆի, Սամվել, Երևան, 1961, էջ 66)։ «Նա գիտեր բոլոր նժույգների անունները, ծագումը, տարիքը, ծանոթ էր և յուրաքանչյուրի բնավորության հետ»։

Շարահյուսական շատ հետաքրքիր կիրառություն ունի «էլ» բառը, որը խոսքի մեջ, նայած իր գրված տեղի և արտահայտած իմաստի, կարող է հանդես գալ 3 ֆունկցիաներով՝ մակբայի, շաղկապի և եղանակավորող բառի։ Այս բանը դրսևորվում է ոչ միայն տարբեր նախադասություններում, այլև նույն նախադասության այլևայլ տարբերակներում։ Օրինակ՝

«Սակայն Մթնաձորում այժմ էլ թավուտ անտառներ կան» (Բակունց)։

Այստեղ «էլ»-ը հաստատում է Մթնաձորում թավուտ անտառների առկայությունը, խոսողի վերաբերմունքն է արտահայտում նախադասության նկատմամբ, հետևաբար եղանակավորող բառ է, ունի «նույնիսկ» եղանակավորող բառի իմաստ։

Նույն նախադասության մի ուրիշ տարբերակում՝ փոխելով իր տեղը, այն ձևը է բերում նոր իմաստ և վերածվում մի այլ խոսքի մասի՝ «Սակայն Մթնաձորում այժմ թավուտ անտառներ էլ կան»։ Այստեղ արդեն «էլ»-ը հանդես է եկել հավելման հարաբերություն արտահայտելու իմաստով՝ սմանվելով «ևս» շաղկապին, հետևաբար ձևը է բերել շաղկապի իմաստ, իսկ ժխտական նախադասություններում այն ստանում է մակբայի իմաստ (Սակայն Մթնաձորում այժմ թավուտ անտառներ էլ չկան)։

14 Գ. Գ ա Ր Ե Ղ Ի Ն Յ ա ն, Շաղկապները ժամանակակից հայերենում, 1963, էջ 152 (ընդգրծումը հեղինակինն է—Խ. Բ.)։

Երկփեղկված իմաստ ունի նաև հակադրություն արտահայտող «այլ»-ը, որը ծագել է անորոշ «այլ» գերանունից և հավասարապես գործածվում է և՛ որպես շաղկապ, և՛ որպես գերանուն։ Այս երևույթը շատ հաճախ նկատվում է և նույն նախադասության տարրեր շարադասություններում։

«Մարությանը չպատասխանեց, այլ ծանրությամբ ծոցից հանեց մի նամակ և տվեց նրան» (Մուրացան, Երկ. ժող., հատ. 1, 1951, էջ 185)։

Այստեղ «այլ»-ը շաղկապել է երկու տարրեր, ներհակակուս հարաբերության մեջ գտնվող նախադասություններ, բայց երբ նույն նախադասության մեջ փոխում ենք նրա տեղը, ալգ ղեպքում այն կատարում է ղերանվան ֆունկցիա։

«Մարությանը չպատասխանեց, ծանրությամբ ծոցից հանեց մի այլ նամակ և տվեց նրան»։ Քանի որ եղանակավորող բառերի և մակբայնի շփման եզրերը ավելի մոտ են և իմաստային ընդհանրությունները ավելի շատ, այդ պատճառով էլ ղրանցից շատերը նախադասության տարրեր շարադասություններում կարող են հանդես գալ մերթ որպես եղանակավորող բառ, մերթ որպես մակբայ։

Բայց չպետք է մոռանալ, որ ընդհանրությունների հետ այդ երկու խոսքի մասերը իմաստային տեսակետից ունեն նաև ղգալի տարբերություններ, այս իսկ պատճառով էլ միայն նախադասության մեջ գրաված իրենց տեղով ղծվար է որոշել նրանց խոսքի մասային պատկանելությունը։ Այսպես, օրինակ. «Իմիջիայլոց, մեր նախնիները համարյա բոլորովին չէին խոսում րարեկամության մասին» (Լեզվի և ոճի հարցեր, հատ. 2, 1964, էջ 59—60)։

Այստեղ «իմիջիայլոց»-ը քերականորեն կապված չէ նախադասության հետ, այն միայն երանգավորել է նախադասությունը։ Մինչդեռ երբ փոխում ենք այդ բառի տեղը, այն տանելով բայից առաջ, այս ղեպքում արդեն նրա արժեքն ու իմաստը որոշվում է խոսողի վերաբերմունքով, նայած թե խոսողը ինչպիսի կշիռ է հաղորդում այդ բառին և ինչպես է արտահայտում։ Եթե խոսողը ցանկանում է ընդգծել, որ մեր նախնիները բարեկամության մասին խոսել են ոչ թե ի ղեպ, այլ յուրահատուկ կերպով, ապա այդ ղեպքում, «իմիջիայլոց»-ը ստանում է բոլորովին նոր արժեք, դառնում է նախադասության անղամ (ձևի պարագա), իսկ նախադասության սկզբում այն այդ ֆունկցիան ու իմաստը երբևք չէր կարող ստանալ։ («Մեր նախնիները համարյա բոլորովին իմիջիայլոց չէին խոսում բարեկամության մասին»)։ Բայց, եթե խոսողը չի ցանկանում մի առանձին նշանակություն տալ մեր նախնիների՝ բարեկամության մասին խոսելուն և չի նշում նրանց խոսքի ինչ-որ հատկանիշը, այլ այդ բառով միայն երանգ է հաղորդում նախադասությանը, ուրեմն «իմիջիայլոց»-ը նախադասության մեջ, բայից առաջ օգտագործվելու ղեպքում էլ նորից մնում է եղանակավորող բառ և նախադասության անղամներից այս ղեպքում անջատվում է ստորակետով՝

«Մեր նախնիները համարյա բոլորովին, իմիջիայլոց, չէին խոսում բարեկամության մասին»։

Այդ նույն բառը երբեմն էլ ղիրքի տեղափոխմամբ նախադասության անղամից կարող է վերածվել եղանակավորող բառի՝

«Նա այդ մասին խոսել է իմիջիայլոց և իր ասածներին մի առանձին կարևորություն չի տվել» (Գ. Իևմիրճյան, Վարդանանք)։

Այս նախադասության մեջ «իմիջիայլոց»-ը ոչ միայն նախադասության սկիզբն անցնելով է վերածվում նղանակավորող բառի, այլև, բացի իր տեղից, մնացած բոլոր հնարավոր տեղերը ղրվելիս միայն ու միայն եղանակավորող բառի իմաստ կարող է ունենալ և ոչ երբևք մակբայի։

Ուրեմն՝ եղանակավորող բառերից մակբայներին և մակբայներից էլ եղանակավորող բառերին (և ոչ միայն սրանց) անցնելու գործում կարևոր նշանակություն ունի նախ բառի խոսքի մասային իմաստը, որին էլ ուղեկցում է նրա շարադասությունը։

Վերևում ասածները նույնությամբ տարածվում են նաև «անկասկած», «անտարակույս» հաստատական և ուրիշ եղանակավորող բառերի վրա։

«Անկասկած, նա կպատմի իր տեսածների մասին» (եղանակավորող բառ)։

«Անտարակույս, Կամոն կղիմի բոլոր միջոցներին» (եղանակավորող բառ)։

Նա իր տեսածների մասին կպատմի անկասկած (ինչպե՞ս—ձևի պարագա)։

«Կամոն բոլոր միջոցներին կղիմի անտարակույս» (ձևի պարագա)։

Ժամանակակից հայոց լեզվում շարադասությունը երբեմն էլ պայմանավորվում է նախադասության այս կամ այն անղամի խոսքի մասային պատկանելությամբ։

Բազմաթիվ ուսումնասիրությունները մեզ բերել են այն համոզման, որ եթե ենթակայի դե-
քում հանդես է գալիս դերանունը, ապա այն մեծ մասամբ ստորոգյալից առաջ է շարադաս-
ւում: Օրինակներ.

«Սա և՛մ հիմա մի պոեստ, և ի՛մ անունը Չարենց,
Պիտի հիշվի դարերում, պիտի լինի բարձր ու մեծ...» (Ե. Չարենց):

«Դու ինձ այն ասա, թե ինչո՞ւ համար է՛լար և այժմ ո՞ւր ես գնում» (Բաֆֆի, Սամվել):
«Նա ավելի թեթև է գնում և առույգ, նա նայում է սպիտակ, փայլող ձյան սավանին» (Բա-
վունց):

Ժիշտ է, անձնական (և ոչ միայն անձնական) դերանուններով արտահայտված ենթակաների
տեղը նախադասության մեջ խիստ կայուն չէ, բայց բավական կանոնիկ ու բարեհնչուն է սո-
վորական շարադասության համար. «Ոչ ոմ չի լսում տազնապղ, Սաքո» (Հ. Թումանյան): «Ոմանի՛
ենթադրել են, որ այն կույր երաժիշտն է փշում իր սրինգը» (Բակունց): «Իդիլոբը վերադարձան»
և այլն: Այդպես չէ, սակայն, հարցական և հարաբերական դերանուններով արտահայտված են-
թակաների շարադասությունը. սրանց նախադաս կիրառումը քերականական այնպիսի ուժեղ ու
կայուն պայմանավորվածություն ունի, որ գրեթե բացառվում է ստորոգյալի նկատմամբ դրանց
ետադաս գործածությունը: Օրինակներ.

«Ի՛նչը կհաղթի կյանքում հերոսին» (Հ. Թումանյան, Թմկաբերդի առումը): «Շուտով կիջնի
ձմեռ, և ո՞վ գիտի, բացվող զարնանը նորից պիտի ինքը բանա այգու դուռը, թե մի ուրիշ ձեռք»
(Բակունց, Միրճավ): «Ամեն ոք, ով սիրում է, անպայման բանաստեղծ է» (Նոր-Դոս, հատ. 5,
1946, էջ 51): «Այն ամենը, ինչ ևս Փափազյանի գրքում, շարադրելու համար հարկավոր է
պարզապես լնցիկլոպեդիստ լինել» (Սով. գրակ., 1964, № 9, էջ 145): «Նոսել մի բանի մասին,
աբր չեմ տեսել, եթե ոչ անտեղի, գոնե մեծամտություն կլիներ» (Նույն տեղում, էջ 148):

Այժմ փորձենք բացատրել, թե ինչու հարցական և հարաբերական դերանուններով արտա-
հայտված ենթակաները միշտ ստորոգյալից առաջ են շարադասվում և շատ հաճախ անցնում
նախադասության սկիզբը:

Ինչպես տեսանք, բերված օրինակներում ենթակայի դերում հանդես եկող հարաբերական
դերանունները ընդհանրապես հանդես են գալիս բարդ ստորադասական կապակցություններում
և ակնարկում են որոշակի բառ-հասկացություններ, որոնք գտնվում են նույն բարդության նա-
խորդ նախադասության մեջ: Հարաբերական դերանունները (ինչպես և բոլոր դերանունները)
ունեն ընդհանուր, շտաբբերակված իմաստ, ուստի և իրենց բովանդակությամբ կարող են վերա-
բերել ցանկացած բառին, դրանք նշանակություն են ստանում միայն կոնկրետ խոսքի մեջ,
կոնտեքստում: Ահա թե ինչու հարաբերական դերանունները որքան հնարավոր է մոտ են զըր-
վում այն բառերին, որոնք ակնարկվում են դրանց կողմից և որոնցից դրանք ստանում են իրենց
նշանակությունը, հակառակ դեպքում այդ հարաբերական բառերը ընթերցողների կամ լսողների
կողմից կարող են վերագրվել ուրիշ բառերի: Ահա նման հնարավոր շփոթությունը կանխելու
մղումով դրանք անհրաժեշտաբար պետք է զրվեն զխաչոր նախադասության ամենամոտ տե-
ղում, այսինքն՝ երկրորդականի սկզբում:

Հարցական կառուցվածքի նախադասություններում առաջին տեղում սովորաբար զրվում է
այն բառը, որի վրա ընկնում է հարցման ուժը: Այդ կարգի նախադասություններում հարցման
ինտոնացիան մեծ մասամբ կենտրոնանում է դերանունների վրա, հենց այդ պատճառով էլ
դրանք անցնում են նախադասության սկիզբը՝ իրենց վրա վերցնելով նաև նախադասության
տրամաբանական շեշտը:

Հարցական դերանուններն են, որ նախադասությանը հարցման երանգ են տալիս և լսողին
մի տեսակ նախազգուշացնում պատասխան տալու անհրաժեշտության մասին:

Սակայն միայն ենթակայի դերում հանդես եկող դերանունները չեն, որ նախադաս գործա-
ծություն ունեն: Այդպիսի կիրառություն ունեն նաև որոշիչի, երբեմն էլ ձևի պարագայի ֆունկ-
ցիաներով հանդես եկող դերանունները:

«Ձարմանքով գուցե նայես իմ այս գրքի էջերին՝ թե անշուք, թե պարզ...» (Չարենց):

«Ահա այդպիսի գործերի թվին են պատկանում հենց Չեխովի գործերը» (Վ. Տերյան):

«Այդպիսի կին, ես իմ հոգին...» (Հ. Թումանյան, Թմկաբերդի առումը):

Մի բանի օրինակ էլ ձևի պարագայի դերում հանդես եկող դերանունների՝ նախադաս գոր-
ծածության վերաբերյալ («Այդ ինչպե՞ս ես արտահայտվում, Մի՛ նայիր ինձ այդպես: Պետք չէ
մարդկանց այդպես նայել» (Վ. Տերյան) և այլն:

Ժամանակակից հայերենում գոյական և թվական անունների՝ որոշիչային ֆունկցիայով հանդես գալիս նույնպես հիմնականում պայմանավորված է շարահասութիւնով: Որոշիչ-որոշյալ կապակցությունները իրարից անջատելու դեպքում թե՛ որոշիչի և թե՛ որոշյալի համար առաջանում է մի տեսակ անորոշություն, իսկ նրանց շրջումը առաջացնում է ֆունկցիաների փոփոխություն: Շատ հաճախ հնարավոր չի լինում նույնիսկ նրանց արանքում ուրիշ լրացումներ տեղավորել: Օրինակներ.

«Հրամանատար Սոկոլովը միշտ առաջինն էր խոսում» (Գ. Մահարի, Սև մարդը):

«ԼԲԵՐ կողքով անցնում էր հստակ Սահակյանը»:

«...Իսկ «Հայաստան» կինոթատրոնը ավանի բնակիչների սիրելի վայրն է» («Սովետական Հայաստան», 30.10, 1964):

«Այսպիսի տեսակներից մեկն էր ջուլիակ Թորոսի խրճիթը» (Նար-Դոս, Ե. ժ., 1, 1955, էջ 3): «Քանի-քանի շենքեր է կառուցել վարպետ Իշխանը» («Սով. Հայաստ.», 30.10, 1964):

Նույնը կարելի է ասել նաև թվականներով արտահայտված որոշիչների վերաբերյալ: Որպեսզի թվականը որոշիչի ֆունկցիա կատարի, անպայման պետք է դրվի որոշյալից առաջ՝ Օրինակներ.

«ՍԵՆԲ օրվա ուխտն արդեն կատարված էր, թեև Սաքուլը ԵՐԵՐՈՒ օրվա գիշերը չէր անցկացրել բաց երկնքի տակ» (Նար-Դոս, Ե. ժ., 1, էջ 41):

Հազար շնփոռ հնչեն թող այս առավոտ,

Հազար թմրուկ խփեն թող այս առավոտ... (Գ. Սարյան):

Նախադասության մեջ միայն եզակի դեպքերում է հնարավոր թվականով արտահայտված որոշիչը շարահասել որոշյալից հետո, այն էլ միայն դասական թվականի դեպքում՝

«Գարնան արևի շողերն առաջին

Ընկել են դահին սեզ Արարատի» (Վ. Կարենց, Արահետներ ձյան տակ, 1963, էջ 44):

«Առաջին սերը, ինչպես որ հացը,

Ինչ էլ որ անես՝ միշտ կուտ է գնում» (Պ. Սևակ):

Կարելի է ասել և այսպես՝ սերն առաջին... և այլն:

Կապակցություններում այս երևույթը, ընդհակառակը, շատ սովորական է և ավելի բարենհնչուն, քան թվականի նախադաս գործածությունը (ակնարկ 4-րդ, գլուխ 16-րդ, տուն 5-րդ, հիվանդասենյակ № 6, հատված երկրորդ, պարագրաֆ 25 և այլն):

Այժմ հարց կարող է ծագել, թե ինչու գոյական և թվական անուններով արտահայտված որոշիչները միշտ նախադաս գործածություն ունեն (բացի դասական թվականների մի քանի մասնակի դեպքերից):

Նախ՝ որ ածականի խոսքի մասային առանձնահատկությունը «առարկայի (երբեմն էլ գործողության ու առարկայի հատկանիշի) տարրերով կազմված հատկանիշներ»¹⁵ ցույց տալն է, և անկախ այն բանից, թե ածականով արտահայտված որոշիչը որոշյալից առաջ կդրվի, թե հետո, այն միշտ ցույց կտա հատկանիշ: Իսկ քանի որ գոյականի բառային իմաստը առարկա կամ առարկայացված հասկացություն ցույց տալն է, հետևաբար այն առարկայի հատկանիշ կարող է ցույց տալ միմիայն տվյալ առարկայից առաջ դրվելով, ինչպես անջատական տիպի լեզուներում „An iron bridge“ առանձին-առանձին նշանակում են երկաթ (iron) և կամուրջ (bridge): Բայց իրար հետ գործածվելիս առաջինը ցույց է տալիս երկրորդի հատկանիշը՝ երկաթյա կամուրջ:

Թվականով արտահայտված որոշիչը սովորաբար որոշյալից հետո չի դրվում, որովհետև այդ դեպքում թվականը մասամբ կամ ամբողջական զրկվում է քանակ կամ կարգ արտահայտելու իմաստից: Եթե «Երկրորդ Արշակ» կապակցության մեջ թվականը ցույց է տալիս միայն կարգ, որ այդ Արշակը պարզապես հաջորդում է մի այլ Արշակի, ապա «Արշակ երկրորդ» կապակցության մեջ արդեն թվականը գրեթե զրկվել է իր նախկին իմաստից. այստեղ «երկրորդ» բառը ցույց է տալիս ոչ միայն Արշակի՝ իր նախորդին հաջորդելու փաստը, այլև արտահայտում է այն բոլոր հատկանիշների ամբողջությունը, որով վերջին Արշակը տարբերվում է

15 Հ. Օհանյան, Ածական անունը ժամանակակից հայերենում, 1962, էջ 13:

առաջինից: Այդ պատճառով էլ եթե նախորդ դեպքում թվականը որոշիչ էր. ապա այս դեպքում հանդես չի գալիս որպես նախադասության առանձին անդամ, այլ իմաստով ձուլվում է որոշյալին, և ամբողջ կապակցությունը դառնում է նախադասության մեկ անդամ: Այդ նույն երևույթը նկատելի է նաև քանական թվականների դեպքում: Ավելին. եթե դասական թվականը հտադաս գործածվելով որոշ չափով պահպանում է կարգ արտահայտելու իմաստը (նկատի ունենք միայն որոշակի կապակցություններ), ապա քանական թվականները ամբողջապես զրկվում են քանակ արտահայտելու իմաստից և դառնում առարկայի մի տեսակ պիտակը: Համեմատել «երկու Վոստոկ» և «Վոստոկ երկու», «երեք Նաիրի» և «Նաիրի երեք», «Կոսմոս տասնհինգ» և «տասնհինգ Կոսմոս» ե այլն: Իսկ որոշ կապակցություններում էլ թվական-որոշիչի հտադաս գործածությունը փոխում է նրա իմաստային հատկանիշը: Այսպես, 5 կարգ. 12 աթոռ, 25 էջ կապակցություններում հինգ, տասներկու, քսանհինգ որոշիչները քանական թվականներ են, իսկ հտադաս կիրառության դեպքում փոխվում է դրանց իմաստային հատկանիշը՝ կարգ 5, աթոռ 12, էջ 25 այս դեպքում արդեն հինգ, տասներկու, քսանհինգ հտադաս որոշիչները ձևոք են բերել դասական թվականի իմաստ¹⁶:

Շարադասության քերականական դերով են պայմանավորված նաև բացահայտիչի և բացահայտյալի ֆունկցիաները. դրանց տեղափոխությունները անպայմանորեն առաջացնում են ֆունկցիաների փոփոխություններ: Հմմտ. «Շիրակի զարդը՝ լենինականը, անճանաչելի է դարձել»: Եվ լենինականը՝ Շիրակի զարդը, անճանաչելի է դարձել:

Արգի հայերենում շարադասության շարահյուսական դերը չի սահմանափակվում միայն քննարկված հարցերի շրջանակներում:

16 Տե՛ս Ս. Արրահամյան, Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 115—116: